ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«10» 11 2022թ.
No 1/18-4/82001-2022

«ՊԱՀԱՊԱՆ 1» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ ԱՆՆԱ ՎԱՆԵՑՅԱՆԻՆ
ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ՔՈՒՉԱԿ, 16/2
ԷԼ. ՀԱՍՑԵ՝ Pahapan119r@mail.ru

Հարգելի տիկին Վանեցյան

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կատարող) միջև 2022 թվականի փետրվարի 22-ին կնքված N ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում պահնորդական ծառայությունների մատուցման ընթացքում հայտնաբերվել են որոշ անհամապատասխանություններ: Մասնավորապես, ինչպես Պայմանագրի շրջանակներում ներկայացված սույն թվականի սեպտեմբեր ամսվա աշխատանքային գրաֆիկների ուսումնասիրությունից, այնպես էլ մատուցվող ծառայությունների ընթացքի փաստացի ստուգումից պարզվել է, որ պահնորդական ծառայություն իրականացնող պահնորդների թվաքանակը չի համապատասխանում Պայմանագրով պահանջվող թվաքանակին (թվով 27 պահնորդներով պակաս է համալրված): Տվյալ անհամապատասխանությունների վերաբերյալ գրավոր տեղեկացրել ենք Կատարողին սույն թվականի սեպտեմբերի 27-ին: Նույն օրվա ընթացքում ստացել ենք պատասխան, որտեղ Կատարողը հայտնել է, որ չի առարկում և խնդրում է տալ ողջամիտ ժամկետ, որի ընթացքում կապահովվի մեր կողմից նշված պահանջները: Առկա անհամապատասխանությունները շտկելու համար տրամադրվել է ժամկետ մինչև սույն թվականի հոկտեմբերի 17-ը: Հոկտեմբերի 17-ին ստացվել է պատասխան, որ տվյալ անհամապատասխանությունը մասամբ շտկել է:

Սույն թվականի հոկտեմբերի 3-ին Կատարողի կողմից ստացվել է 2022 թվականի սեպտեմբերի 01–ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ իրականացված պահնորդական

ծառայության վերաբերյալ N 08 ակտը, որին սակայն տրվել է բացասական եզրակացություն: Սույն թվականի հոկտեմբերի 13-ին էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձվել հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն թվականի հոկտեմբերի 18-ին Ընկերության կողմից ստացվել է 2022 թվականի սեպտեմբերի 01–ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ իրականացված պահնորդական ծառայության վերաբերյալ նոր ակտ, որտեղ ծառայության մատուցման արժեքը նվազեցված է: Ըստ Կատարողի բանավոր հաղորդման՝ նոր շտկված ակտում տրված արժեքը ստացվել է նախորդ ակտի արժեքից թվով 27 աշխատակցի համամասնությամբ գումարը պակասեցնելով:

Սույն թվականի նոյեմբերի 1-ին Կատարողի կողմից ստացվել է 2022 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ իրականացված պահնորդական ծառայության վերաբերյալ N 9 ակտը: Այնուհետև տրամադրվել է հոկտեմբեր ամսվա աշխատանքային ժամանակացույցերը և մանրամասն տեղեկատվություն, ըստ որի կազմվել է N 9 ակտը: Կատարողի կողմից Պատվիրատուին տրամադրված տեղեկատվության համաձայն N 9 ակտը կազմելիս՝ ծառայության մատուցման օրերի քանակը հաշվվել է ըստ պահնորդների աշխատանքի ընդունման ամսաթվի, սակայն ըստ Պայմանագրում առկա ծառայության մատուցման գնման, վճարման պայմանների՝ վճարումը կատարվելու է փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ ըստ օրերի քանակի: Փաստացի մատուցած ծառայության տվյալները հաշվարկվել են ըստ Կատարողի կողմից ուղարկված աշխատաժամանակի գրաֆիկների և փաստացի իրականացված ծառայության ուսումնասիրությամն: Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ հոկտեմբեր ամսվա ընթացքում տեղերում պահնորդների համալրումը իրականացվել է մասնակի և թվով 2 պահնորդ պակաս է համալրվել հոկտեմբերի 31-ի դրությամբ: Ըստ իրականացված հաշվարկների N 9 ակտում գրված ծառայության մատուցման գինը ավել է հաշվարկվել 362,424 ՀՀ դրամի չափով: Նշվածով պայմանավորված սույն թվականի նոյեմբերի 8-ին տրվել է բացասական եզրակացություն:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրի շրջանակներում սույն թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին մատուցված պահնորդական ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով

սահմանված պահանջներին, այսինքն՝ պահնորդական ծառայություն իրականացնող պահնորդների թվաքանակը չի համապատասխանում Պայմանագրով պահանջվող թվաքանակին, ինչի արդյունքում անհամապատասխանություն է առաջացել նաև աշխատաժամանակի միավորների (24ժ (շաբաթական 7 օր), 8ժ (շաբաթական 5 օր) շրջանակներում, որն էլ համարվում է Պայմանագրի էական խախտում, ուստի առաջնորդվելով Պայմանագրի 2.1.3-րդ կետի «ա» պարբերության պահանջով՝ Պատվիրատուն ստիպված է Պայմանագիրը միակողմանի մասմասնակի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ Կատարողից սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների համար պետք է գանձվի տուգանք Պայմանագրի գումարի 0,5 տոկոսի չափով, որը պետք է փոխանցվի ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի 900005028106 հաշվեհամարին: Տուգանքը սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների համար կազմում է 4,386,912.76 ՀՀ դրամ (438,691,276 X 0.5% X 2):

Կատարողից պետք է գանձվի 131 607 382"8 ՀՀ դրամ որակավորման ապահովման գումար և 43 869 127.6 ՀՀ դրամ՝ պայմանագրի ապահովման գումար:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում Պատվիրատուն կնախաձեռնի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգը:

11/10/2022

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ ԳԿՎԱՎ գնումների համակարգման բաժին
Սպարտակ Հարությունյան
Հեռ.060-844-702